ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ՈՐՈՇՈՒՄԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ, ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՆԵՐԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քննության առնելով ՌՍՖՍՀ, Ուկրաինական ՍՍՀ, Բելոռուսական ՍՍՀ, Ուզբեկական ՍՍՀ, Ղազախական ՍՍՀ, Վրացական ՍՍՀ, Լիտվական ՍՍՀ, Մոլդավական ՍՍՀ, Լատվիական ՍՍՀ, Կիրգիզական ՍՍՀ, Տաջիկական ՍՍՀ, Թուրքմենական ՍՍՀ և Էստոնական ՍՍՀ Գերագույն սովետների նախագահությունների դիմումները՝ կապված Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանական ու Հայկական ՍՍՀ-ներում ստեղծված իրադրության հետ, և ղեկավարվելով ՍՍՀՄ սահմանադրության 81-րդ հոդվածով, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը **որոշում է.**

1. Նշել, որ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների կապակցությամբ Ադրբեջանական և Հայկական ՍՍՀ-ներում ստեղծված իրավիճակը վնաս է հասցնում այդ հանրապետությունների ժողովուրդներին և ամբողջությամբ վերցրած ՍՍՀՄ-ի՝ որպես միասնական միութենական բազմազգ պետության ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդմանը:

Անթույլատրելի համարել, երբ ազգային-տերիտորիալ բարդ հարցերը փորձում են լուծել պետական իշխանության մարմինների վրա ճնշում գործադրելու միջոցով, հույզերի ու կրքերի բորբոքման, ամեն կարգի ինքնագլուխ կազմավորումների ստեղծման մթնոլորտում, որոնք հանդես են գալիս ՍՍՀՄ սահմանադրության մեջ վավերացված ազգային-պետական և ազգային-վարչական սահմանների վերաձևման օգտին, ինչը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների:

Վճռաբար դատապարտել առանձին անձանց ու խմբերի կողմից թույլ տրված հանցավոր գործողությունները, ինչի հետևանքով կան մարդկային զոհեր: Ի գիտություն ընդունել, որ դրա մեղավորները ենթարկվում են վարչական և քրեական պատասխանատվության:

2. Ադրբեջանական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի ժողովրդական դեպուտատների սովետներին՝ ղեկավարվելով կուսակցության XXVII համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի հետհամագումարյան պլենումների որոշումներով, Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի հղած դիմումով, արմատապես բարելավել բընակչության շրջանում տարվող մասսայական, քաղաքական և դաստիարակչական աշխատանքը՝ ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների անսասանության, ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների բարեկամության և համախմբվածության ոգով: Խորապես ու բազմակողմանիորեն վերլուծել ազգամիջյան հարաբերությունները սրող պատճառները, ժամանակին վերացնել դրանք, ակտիվորեն հանդես գալ նացիոնալիստական և էքստրեմիստական ամեն տեսակ դրսևորումների դեմ: Հանգիստ, գործարար մթնոլորտ ստեղծել արտադրական կոլեկտիվներում և ուսումնական հաստատություններում, հանրապետություններում բնակվող բոլոր ազգերի և ազգությունների աշխատավորների ջանքերը մոբիլիզացնելով մեր հասարակության մեջ կատարվող հեղափոխական վերափոխումների խնդիրների լուծման համար:

3. Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը՝ իրականացնել անհրաժեշտ համաձայնեցված միջոցառումներ սոցիալիստական օրինականության և հասարակական կարգի ամրապնդման նպատակով, ապահովել բոլոր ազգությունների քաղաքացիների օրինական շահերի պաշտպանությունը, խիստ պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր իրենց գործողություններով ապակայունացնում են իրադրությունը, ձեռք բարձրացնում եղբայրական սովետական ժողովուրդների բարեկամության ու համագործակցության վրա:

4. ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին՝ մշակել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսական և սոցիալ-կուլտուրական զարգացման հասունացած հարցերի լուծման նպատակին ուղղված միջոցառումներ:

5. ՍՍՀ Միության դատախազությանը և ՍՍՀՄ ներքին գործերի մինիստրությանը՝ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել Ադրբեջանական և Հայկական ՍՍՀ-ների տերիտորիայում հասարակական կարգուկանոն հաստատելու և բընակչության օրինական շահերը պաշտպանելու համար:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության
նախագահ՝ Ա. ԳՐՈՄԻԿՈ
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության
քարտուղար՝ Թ. ՄԵՆԹԵՇԱՇՎԻԼԻ

Մոսկվա, Կրեմլ: 28 մարտի 1988 թ.